ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ЧАМБАРАКСКАЯ ГОРОДСКАЯ МЭРИЯ
REPUBLIC OF ARMENIA GEGHARKUNIK DISTRICT CHAMBARAK COUNSUL
08100711

/0265/2 22 55

N 520

«02» 08. 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
պ-ն. Ն.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ

Ձեզ է ներկայացվում Ճամբարակ համայնքի ավագանու 28.07.2011թ. թիվ 4 նիստի N 14 որոշումը:
Առդիր՝ 3 /երեք/ թերթ:

Քաղաքապետ Յու.Ավալյան

Կատ. Ֆ.Սարգսյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

.28.07. 2011թ. N 4

ք. Ճամբարակ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

### ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Յու.ԱՎԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 14

28/07/2011

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 29 հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1.Ճամբարակ համայնքի բյուջեի եկամուտներում

*37 խմբի 4 ենթախմբի <Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումները /Սուբվենցիաներ/> ավելացնել 658500 /վեց հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր/ դրամ, իսկ 47 խմբի 1 ենթախմբի <Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները> պակասեցնել 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամով:

2. Ճամբարակ համայնքի բյուջեի եկամուտներին ավելացված 658500 /վեց հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր/ դրամ սուբվենցիան ուղղել

09 բաժնի 05 խմբի 01 դասի <Երաժշտական կրթություն> դասակարգման 4637 <Ընթացիկ դրամաշնորհներ կազմակերպություններին> հաշվին ազգային նվագարանների գծով վարձի փոխհատուցման նպատակով, իսկ

04 բաժնի 02 խմբի 01 դասի <Գյուղատնտեսություն> դասակարգման 4111 <Աշխատողների աշխատավարձեր> և հավելավճարներ հաշվից պակասեցնել 97392 /իննսունյոթ հազար երեք հարյուր իննսուներկու/ դրամ, 4131 <Սոցիալական ապահովագրության վճարներ> հաշվից պակասեցնել 22608 /քսաներկու հազար վեց հարյուր ութ/ դրամ:

3. Ճամբարակ համայնքի 11 բաժնի 01 խմբի 02 դասի <ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ> դասակարգման 4891 ,Պահուստային միջոցներ> հաշիվը պակասեցնել 2110000 /երկու միլիոն մեկ հարյուր տաս հազար/ դրամով և այն տալ.

ա/. 01 բաժնի 01 խմբի 01 դասի <Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում> դասակարգման 4252 <Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում> հաշվին 300000 /երեք հարյուր հազար/ դրամ ծառայողական մեքենայի նորոգման նպատակով, իսկ 4264 <Տրանսպորտային նյութեր> հաշվից 300.0 /երեք հարյուր հազար/ դրամը դեկտեմբեր ամսից տեղափոխել օգոստոս ամիսը:

բ/ 01 բաժնի 06 խմբի 01 դասի <Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ դասակարգման 4819 <Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին> հաշվին 750000/յոթ հարյուր հիսուն հազար/ դրամ.

գ/. 04 բաժնի 02 խմբի 01 դասի <Գյուղատնտեսություն> դասակարգման 4235 <Կառավարչական> ծառայություններ> հաշվին 25000 /քսանհինգ հազար/ դրամ խորհրդատվական ծառայություններ մատուցելու նպատակով.

դ/ 08 բաժնի 01 խմբի 01 դասի <Հանգստի և սպորտի ծառայություններ> դասակարգման 4239 <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հաշվին 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ և 4261 <Գրասենյակային նյութեր և հագուստ> հաշվին 320000 /երեք հարյուր քսան հազար/ դրամ համահայկական խաղերին մասնակցելու համար համազգեստ ձեռքբերելու նպատակով.

ե. 08 բաժնի 03 խմբի 01 դասի <Հեռուստառադիոհաղորդումներ> դասակարգման 4234 <Տեղեկատվական ծառայություններ> հաշվին 220000 /երկու հարյուր քսան հազար/ դրամ տեղեկատվություններ հաղորդելու համար:

զ/ 09 բաժնի 01 խմբի 01 դասի <Նախադպրոցական կրթություն> դասակարգման 4239 <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հաշվին 145000 /մեկ հարյուր քառասունհինգ հազար/ դրամ թիվ 3 մսուր-մանկապարտեզի համար:

է/ 09 բաժնի 06 խմբի 01 դասի <Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ> Դասակարգման 4239 <Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների> հաշվին 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ տրանսպորտային ծառայություններ ձեռքբերելու նպատակով:

Կողմ -8 Դեմ -1 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ՎԱԶԳԵՆ
2. ԱՂԱՋԱՆՅԱՆ ՆՎԵՐ
3. ԲԱԼՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՋԱՋՅԱՆ ԱՐՏՈՒՐ
5. ԽԵՉՈՅԱՆ ԹԱՐԽԱՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԱԻՐԱ
8. ՍԵԻՐԱՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

Դեմ:
1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ԱՎԱԼՅԱՆ